

**ՆԵՂՈՒԹԵԱՆ ՊԱՍԿԸ**

Գոհութիւն յայտնենք Աստուծոյ ամէն բանի մէջ. թէ՛ նեղութեան, թէ՛ հանգիստի, որովհետեւ երկուքն ալ օգտակար են արդարներուն եւ մեղաւորներուն համար: Պօղոս եւս, որուն ո՛չ ոք կրնար մամնիլ, նեղութեամբ անցուց իր կեանքը եւ որովհետեւ գայն շահ կը նկատէր եւ ո՛չ վնաս, անոր համար կ'ըսէ. «Ամէն անոնք, որոնք կ'ուզեն Քրիստոսով աստուածապաշտութեամբ ապրիլ, պիտի հալածուին եւ նեղութիւն կրեն» (Բ. Տիմ. Գ.12): Արդարեւ, առաքիլնութեան նամբէն գացող մարդը չի կրնար առանց վիշտի եւ նեղութեան ըլլալ:

Երբ Յոբ իր ժամանակ կ'ըսէր. «Մարդու կեանքը երկրի վրայ փորձութիւն է», ո՞րչափ աւելի է հիմա եւ կամ՝ ապագային: Կրնա՞յ մէկը պատերազմի մէջ ըլլալ եւ հանգիստ փնտռել: Արդ, քանի որ նեղութիւններն ու փորձութիւնները այս աշխարհի պատերազմներն են, հիմա հանգիստի ժամանակ չէ, այլ՝ քրտինքի: Ինչպէս, որ ըմբիշները նախ կը մերկանան, կ'օծուին եւ ապա կը կռուին, նոյնպէս դուն, որ Աւագանով մերկացար եւ լուսցւեցար ու միւտոնով օծուեցար, պէտք է կռուիս: Եթէ հանգիստ կը փնտռես, ինչո՞ւ մերկացար եւ կռուի պատրաստուեցար: Նեղութիւնը բոլորին համար է: Թէ՛ արդարները թէ՛ մեղաւորները կը չարչարուին, սակայն տարբեր ձեւերով:

**ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ**

**ՃԱՇՈՑ ԿԱՍ ՃԱՇՈՒ ԳԻՐԸ**

Հաստատակազմ եւ մեծածաւալ հատոր մըն է ճաշու գիրքը, որ իր մէջ կ'ամփոփէ ամէնօրեայ Սուրբ Գրային եւ աւետարանական ընթերցումներ: Տօնական օրերու անմիջական արտայայտիչն է անիկա, որ յատուկ ճառագայթումով մը՝ աւետարանական հատուածներու ընթերցումով կը բացայայտէ օրուան խորհուրդը, եւ Անդաստանի արարողութեանց սկիզբնաւորութեան լուսարձակի տակ կ'առնէ աւետարանական այն հատուածները, որոնք աղերս ունին օրուան խորհուրդին հետ:

Ճաշու գիրքին մէջ կը գտնենք Մեծ Պահոց Կիրակի օրերու «Նորաստեղծեալ»-էն առաջ կարդացելիք աւետարանական հատուածները, յինանց շրջանի ամէնօրեայ չորս Աւետարաններու շարունակական ընթերցումները, առաւօտեան ժամերգութեան՝ Յովհաննէս, երեկոյեան ժամերգութեան առաջին աւետարանը՝ Մատթէոս եւ երեկոյեան արձակման աւետարանը՝ Մարկոս աւետարանիչներէն:

Ո՛վ ժողովուրդ, Սիոնի շուրջը դարձէք, անոր չորս դիմ պատեցէք, անոր աշտարակները համբեցէք: Լճա՛ւ դիտեցէք պարիսպները, գննեցէք անոր ամրութիւնները, որպէսզի պատմէք գալիք սերունդներուն...

Շարունակելի

**ՀԱՍՅԷ.**

**ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ** - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲՐԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak](#) Ծրագրերը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քինյ. Սարգիսեան



ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021

ԹԻԻ 51

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**  
Ես. 38.1-8 Եբր. 1.1-14  
**ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 17.1-10**

**ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 17.1-10**

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման, որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար, որ իր վիզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար, զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ՛ զինք, եւ եթէ զոջայ՝ ներէ՛ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զոջայ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»:

Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի»:

Ենթադրե՛նք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիտ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. «Անմիջապէս գնա՛, ճաշդ կէ՛ր»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք, որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէ՛ք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի»:

Հաւատք ունի՞նք Քրիստոսի հանդէպ. եւ նախ քան այս հարցումը, նախ՝ հարց տանք մենք մեզի «Կը ճանչնա՞նք Քրիստոսը»: Քրիստոսը ճանչնալու եւ Անոր հաւատալու միակ աղբիւրը Աստուածաշունչն է: Մեր հոգեւոր ծարաւը յազեցնենք՝ Աստուածաշունչ մատենը կարդալով:

**Ս. ՅԱԿՈՒՄՅԱՆԻ ՎԵՐԱԳՐՈՒՄ**

Մեր եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող սուրբերէն մէկն է՝ Սուրբ Յակոբ Մծբնացի Հայրապետը: Իր տօնը կանուխէն հաստատուած է Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ ու կը տօնուի ամէն տարի՝ Դեկտեմբեր ամսուան կէսերուն եւ միշտ կը զուգահիշուի Շաբաթ օրուան:

**ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒՄՅԱՆԻ ԿԵԱՆՔԸ**

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր եւ հօրաքրոջ որդին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ:

Ան իր քարոզչութեամբ, հրաշագործութիւններով եւ նվաճող խիստ կեանքով՝ նշանաւոր եղած է: Մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած ժողովին՝ 325 թուականին:

Մծբնի Աթոռին համար՝ ձեռնադրուած է եպիսկոպոս, ինչպէս Աստուած տեսիլքի մը մէջ յայտնած էր՝ Մարուգէ նվաճողին:

Գրած է վարդապետական նախք, բարոյախօսական գրութիւններ եւ մատենագրութեան մէջ ծանօթ՝ «Զգօն» գիրքը:

Ս. Գրիգոր Նարեկացին, ներքող մը նուիրած է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին: Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» շարականը նուիրած է Ս. Յակոբին:

Այս շարականը գրուած է ա՛յն դէպքին առթիւ, ուր կը պատմուի, թէ Պարսից Շապուհ Բ. Թագաւորը աշխարհածաւալ իր արշաւանքներու ընթացքին՝ կը հասնի Մծբն: Այն ատեն, Սուրբը կ'աղօթէ, եւ ահա պիծակներու եւ ձիաստացներու մեծ բազմութիւն մը՝ կը յարձակի պարսիկներու ձիերուն վրայ եւ անոնք խուճապի մատնուելով՝ կը փախչին, իսկ զինուորները՝ հետիոտն կը նահանջեն:

**«ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏԱՍԽԱՆ» ԲԱԺԻՆ**

**ԳԻՏԷԻՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ**

- 1.- Գիշերային ժամերգութիւն:
- 2.- Առաւօտեան ժամերգութիւն:
- 3.- Արեւագալի ժամերգութիւն:
- 4.- Ծաշու ժամերգութիւն:
- 5.- Երեկոյեան ժամերգութիւն:
- 6.- Խաղաղական ժամերգութիւն:
- 7.- Հանգստեան ժամերգութիւն:

**Վստահաբար կը փափաքիք՝ իւրաքանչիւր ժամերգութեան բացատրութիւնը ունենալ: Անպայման կը խոստանանք յառաջիկայ թիւերուն մէջ, մէկ առ մէկ բացատրել ձեզի՝ բոլոր ժամերգութիւններուն մասին:**

**ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ**

Մի՛ հեռանաք իմ օրէնքներէս, որովհետեւ ես եւս հնազանդ զաւակ էի հօրս եւ սիրելի՝ մօրս աչքին, որոնք կը սորվեցնէին ինձի եւ կ'ըսէին . «Մեր խօսքերը սրտիդ մէջ տեղաւորէ՛, պահէ՛ մեր պատուիրանները եւ ապրի՛ր»:

**Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս**

**ՔՐԻՍՏՈՍԻ ԽՕՍՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ**

Չեր ուշադրութիւնը պիտի ուզեմ հրաւիրել Մտթ. 17.18-ին մէջ եղող բառի մը վրայ: Այդ բառն է՝ «աստեց»: «Մաստեց» չար ոգին: Յիսուս չար ոգին դուրս հանելու համար պատանիէն՝ չկռուեցաւ անոր դէմ, այլ պարզապէս բացաւ իր բերանը եւ արտասանեց ազատագրութիւն բերող իր խօսքը: Ան իր խօսքով սաստեց չար ոգին, ճիշդ ինչպէս իր խօսքով սաստեց փոթորկած ծովը, կամ իր խօսքով տիեզերքը գոյութեան բերաւ:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը**

Քրիստոսի խօսքին զօրութեան դիմաց՝ Սատանաները իսկոյն կը փախչին: Եւ ոչ միայն կը փախչին, այլէ՛ կը սպաննուին: Յայտնութիւն 19.21-ին մէջ կը կարդանք, որ «գազանին զօրքերը սպաննուեցան ձիուն վրայ հեծեալին սուրով, որ կ'ելլէր անոր բերանէն»: Գազանը՝ Նեոն է, հեծեալը՝ Քրիստոս, հեծեալին բերանէն էլլող սուրը՝ Քրիստոսի խօսքը: Մերտենք Աստուածաշունչը, որպէսզի Քրիստոսի խօսքին սուրով զինուինք: Այդ Սուրին դիմաց, ոչ Սատանան եւ ոչ ալ սատանայութիւն ընող մարդիկ կրնան դէմ դնել:

**ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ ՊԱՏԱՆՍԻՆԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒԵՍ ԱՍՏՈՒԾՄԷ՝ Կարդա՛ ՍԱԳՄՈՍ 48**

Մեծ է Տէրը, մեր Աստուածը, եւ ամէն օրհնութեան արժանի՝ իր քաղաքին մէջ, իր սուրբ լեռան վրայ: Իր բարձրութեամբ գեղեցիկ է, ամբողջ աշխարհի ուրախութիւնն է Սիոն լեռը, Աստուծոյ բնակավայրը, մեծ Թագաւորին քաղաքը: Աստուած ներկայ է անոր ամրութիւններուն մէջ, եւ ցոյց տուած է՝ թէ ի՛նքն է իրաւ ամրոցը:

Ահա թագաւորները հաւաքուեցան, եւ միասնաբար յարձակեցան քաղաքին վրայ, բայց երբ զայն տեսան՝ ապշեցան, զարհուրեցան եւ փախուստի դիմեցին: Դողը բռնեց զիրենք, ինչպէս երկունքը կը բռնէ ծննդական կինը, կամ ինչպէս որ արեւելքէն փչող հովը կը խորտակէ Թարշիշէն եկող նաւերը: Ինչ որ լսեր էինք՝ այժմ մեր աչքերով տեսանք Ամենակալ Տիրոջ քաղաքին մէջ, մեր Աստուծոյն քաղաքին մէջ: Աստուած կանգուն պիտի պահէ զայն յաիտեան: Քու տաճարիդ մէջ, ո՛վ Աստուած, մենք մշտական հոգածութեանդ մասին կը խորհինք: Քու անունդ, ո՛վ Աստուած ծանօթ է աշխարհի չորս ծագերուն, եւ բոլորը քեզ կ'օրհերգեն: Արդար եմ գործերդ: Թող ուրախանակ Սիոն լեռը, թող ցնծա՛ն Յուդայի քաղաքները, արդար դատաստաններուդ համար: